


Հ Ա Ս Ց Է

Rédaction du Journal arménien

ARCHALOUYCE

(EGYPTE) LE CAIRE



ՊԱՏՄԱՆՔ

ԵՂԻՊՏՈՍ

Տարեկան ցր. ողջ 30

ԱՐՏԱՍՄԱՆ

Տարեկան ֆրանկ 10

Փոստագրով ՅԱԵԼՈՒՍՏ ԵՆՐՈՒ ՎՈՒՄԱՐԵԿ ԳՆԱՐԱՄԷՒ ԳԵՐԾ ԱՓԻՒ ԸՆԴԱՆԷ .

Չի հրատարակուած ձեռագիրները եւ չեն սրուիր :

Բաժանորդագրութիւնը կանխիկ է. իսկ ժանուցումները կ'ընդունուին մասնաւոր հաճածապէս :

Թի՛ ԱՐՇԱԼՈՅՍԻ եւ թի՛ ՏՊԱՐԱՆԻՆ վերաբերեալ Արարական խնդրոց համար պիտի է ղիւնէր համարուեալ հասցեով թերթի Մասնատարին, որ է՛

Քառասուն տարեկան ԵՂԻՊՏԻ ՓՈՐՈՍՅԱՆ

ՓԵՏՐՈՒԱՐ ՓՈՒՍՏԱՆ

— 42 շՐՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ՕՐԵՐԸ — Թող ստանալիքները ուղղակի պատասխանուող եւ իրենց գրածներուն — ZUSE 20 ՓԱՄԱ ՈՂՁ —

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ Ս Պ Ա Ն Ո Ւ Ա Ս Թունուար 30/12 Փետրուար 1908

Եզրկատու ալ ունեցաւ հրապարակային սպանութեան իր տիրապետութեան արձանագրութիւնը :

Անցեալ Չորեքշաբթի Փետր. 12ի երեկոյն, ժամը 9 ին ատենները, հայ երիտասարդի մը ձեռամբ ընկնելու երեք զնդակներով սպանուեցաւ Պ. Արփիարեան :

Ինչ որ հարեւարներու յայտնի է գաղտնի մեռնիլը գիտցած, լսած է իր սրտին մէջ կամ թղթի վրայ արձանագրած էր իր սովորական գործողութիւն մը, բնականաբար տարբեր ակնկալութիւն մը չուներ իրեն համար : « Կուժը շուրին ճամբան կը կտորի. կ'ըսեն » :

Մարդասպանը ձերբակալուած է և իր խոստովանութիւնները ըրած նախնական հարցաքննութեանց մէջ սպասենք գիտնալու համար թէ՛ Եզրկատուական կառավարութիւնը ի՞նչ պիտի մտածէ այս օրինակ սպանութեանց դէմ և թէ՛ ի՞նչ նոր միջոցներ պիտի կրնայ ձեռք առնել իր երկրին ժողովրդեան խաղաղութիւնը պահպանելու համար, ինչ որ իրեն պարտաւորութիւնն է, եթէ ինչի մասը կատարել ուղէ :

Պ. Արփիարեան յաջողակ հրապարակագիր մը եղած է քառուրդ դարէ աւելի ժամանակամիջոցի մը համար. իր բոլոր գրածներն ալ կը կարգացուէին առհասարակ ամենուն ալ կողմէ, բայց կային ընթերցողներ ալ՝ որ իր գրածները և յայտնած գաղափարները քննադատութեան բովին մէջ կը դնէին ու շատ անգամ ալ իրաւացի չէին գտներ : Ամէն պարագայի մէջ սակայն, զբրական հրապարակին վրայ Պ. Արփիարեան շատ արտազորող մը եղած և մեծ անուն մը չինած է, և ոմանք կ'ըսեն որ՝ եթէ նա կուսակցական գործերու չ'միջամտէր, հաւանական է որ գրական սեփականութիւնը իր ազգին աւելի օգտակար պիտի կրնար ըլլար :

Իր երիտասարդ և եռանդուն ժամանակներուն մէջ Պ. Արփիարեան գործնական յեղափոխութեան մէջ վնասուած է ազգային ազատագրութիւնը. իսկ երբ տարիներ անցնելով դէպքերը անհամեմատելի փոփոխութիւններու ենթարկուած են, այն ատեն սկսած է պայքարել բուն իսկ իրեն ժամանակ մը սիրած ու փայփայած սկզբունքներուն դէմ : Այլ ժամանակը անցած էր սակայն : Եթէ սկիզբէն ի վեր մասնակցած և շատ մօտէն միջամտած չ'ըլլար յեղափոխական այս ու այն գործունէութեանց, այսօր իր ձայնը շատ ուժեղ և յստակ պիտի հնչէր ամենուն ալ ակնիցին, և թերևս իր մասնաւոր օգուտներն ալ ունենար. բայց մեղքատուր հակառակը տեղի ունեցած էր և իր գրչին ազգեցութիւնն ալ իր բուն բարձրութիւնէն ինկած :

Ըողներ պիտի ըլլան անշուշտ թէ՛ ի՞նչպէս առանց այդ հոսանքին խառնուելու սերտել պիտի կարենար ճշգրտա իրողութիւնները ըստ այնմ դարձան մը առաջարկելու համար : Մեր պատասխանը շատ պարզ է այս հարցին և ամէն մարդ մեզի հետ զիւրութեամբ կրնայ տալ՝ իր խղճի ձայնին անաւարձ. ուրիշ բան է թէ՛ երկրի ազգեցութեան ներքեւ ըզգացածները խոստովանել խոյս տան. ու այս կարգի մարդոց ամեն քայլափոխի մէջ հանդիպել կարելի է : Եթէ Պ. Արփիարեանի հայ գրականութիւնն ու հրապարակագրութիւնը մեծ բան կը կորսնցնէ և պէտք է որ ցաւինք այդ կորուստին վրայ :

Թ Ղ Ք Ա Պ Ա Ն Ա Կ

Սոյն վերագրիւն սակ պիտի աւելուի և այն բոլոր գրութիւնները, որոնցով պիտի գրադրուին առաջիկային, երբ ժամանակը հասնի և առիթը ներկայանայ : «Արշալոյս»-ի համարագրութիւնը երբեք պատասխանատու չ'ըսուածներ «Թղթապանակ» վերնագրոյն սակ աւելուելու գրութիւններուն համար, որոնք շոյ իր յուշագիր պիտի կրնան ծառայել և ոչ այլ ինչ :

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԵՂԻՊՏՈՒ ԲՈՂՈՒՐՂ ԴԱՇԵՍԱԿՑԱԿԱՆՍԵ ՄԱՍՆԱՍԻՐԻՆ

Եզրկատու բողոքող Դաշնակցականներու Մասնախումբի ներկայիս կը

յայտարարէ որ, Պ. Արփիարեանի հրատարակած է Մասնախումբի անգամակցութեան և հետեւաբար կը խնդրուի մեր ընկերներէն որ, ապէ վերջը իրենց մեզի հետ ունեցած յարաբերութիւնները հետեւեալ հասցեով շարունակեն :

Յիշեալ Պարոնը իր վերջերս հրատարակած մէկ թուոցիկին մէջ մեր հասցէին կարգ մը ամբաստանութիւններ ըրած ըլլալուն, Մասնախումբի հարկ տեսաւ զինքը ընկերական ատենի մը առջեւ հրաւիրել, որուն որոշումը պիտի հաղորդուի հասարակութեան : Եզրկատուի Բող. Դաշնակց. Մասնախումբ Աղեք. 4 Փետրվ. 908

Մեր հասցէն. H. Agopian Rue Attarine No 39 Alexanqrie (Egypte)

ԲՈՂՈՐ ԵՐԿԻՐՆԵՐՈՒ ԲՈՂՈՒՐՂ ԴԱՇԵՍԱԿՑԱԿԱՆՆԵՐՈՒՆ

ԸՆԿԵՐՆԵՐ, Հագուել երեք ամիս միայն եղաւ զեռ հրատարակուելը այն «Կոչ»ին, որ ուղղուած «Բողոք Երկիրներու Բողոքող Դաշնակցականներուն» և ստորագրուած Եզրկատուի Բողոքողներու Մասնախումբին կողմէ, մէջտեղ կը նետէր Տաճկահայ դատին հանդէպ Հ. Յ. Դաշնակցութեան զբաւած զիբքին հետաքրքրական հարցը, այնքան անկեղծ ու սրտաբուլի երեւոյց չեցանքով : Եւ սակայն երեք ամիսէ առաջ կարծ ժամանակի մը մէջ իսկ ան փուլ կուտայ արդէն «Բողոք» անունը կրող գեղեցիկ բաներու այդ շէնքը և անոր տակ կը սկսի երեւալ ազատ զաղանթներու զանգուածը, բուն զրգապատճառը այդ «Կոչ»-ի հրատարակութեան :

Եւ, սկիզբները, բողոքող մը եւ, իբր այդ, Բողոքողներու ժողովին մէջ զրիթէ միաձայնութեամբ Մասնախումբի անդամ ընտրուած, ամէնէն եռանգուն հաւատացեալներէն մէկը եղայ այն կարծեցեալ գաղափարական դատին որը կը բացուէր Հ. Յ. Դաշնակցութեան դէմ ու նետուեցայ այնքան առաջ որ թոյլ տուի իմ անունս տալ իբր բողոքներու պաշտօնական հասցէ : Եւ սակայն այսօր, այսպէս հագուել երեք ամիս յետոյ, գաղափարի և սկզբունքի ազուր անուններուն տակ պահուած այդ խըրատուներուն իսկական նպատակն ու գործունէութիւնը մօտէն տեսնելով, կը ստիպուիմ հրապարակ գալ ամբողջ դաշնակցական ընկերներու յայտնելու համար թէ, այդ բողոքողները զիս չարաչար խաբէր են, և զիմեւ չեն համար նաեւ :

բողոք այն դաշնակցականներուն որոնք, զուցէ, պահ մը համոզուած գտնուեցան այս մասնախումբի հրաւերներուն, որպէսզի բանան իրենք ալ իրենց աչքերը և չարունակեն այլևս հաւատք ընծայել այդ «Բողոքողներուն» :

Ընկերներ, եւ խաբուեցայ. խաբուեցայ երբ անհասանք զորս երբեմն կը ճանչնայի իբր գիտակից և իսկական սրտացաւ Եզրկատուականներ, եկան, խիստ համոզիչ ձեւերով, յայտնել ինձի թէ Հ. Յ. Դաշնակցութիւնը իր վերջին Ընդհ. Ժողովին մէջ ալ մէկ կողմ նետած էր Տաճկահայ գործունէութիւնը, թէ Դաշնակցութիւնը չեղած էր իր հին բուն նպատակէն եւ թէ ան ուրացած վերջացուցած էր հայկական դատը, աս ամէնուն իբր կարկառուն պայտջոյց մէջտեղ գնելով Սոցիալիզմը, բան մը որ ինքն ալ այնքան շարաչար շահագործումներու առարկայ դարձաւ այդ միւսնոյն անձերուն ձեռքին մէջ :

Ու հիմա կը տեսնեմ թէ սո՛ւտ էին այս բոլորը : Երեք ամիս անդադար մօտէն հետեւելով Հ. Յ. Դաշնակցութեան գործունէութեան, հիմայ կը հասկնամ թէ ատորք բոլորը խաբուութիւններ էին միայն, թէ Հ. Յ. Դաշնակցութիւնը, սօցիալիստ, այո՛, բայց առաւել քան երբեք կատարելի կորովով առաջ մղելու զբաղուած է ամբողջ հայ ժողովուրդի, թէ Տաճկահայ և թէ Ռուսահայ, ազատագրութեան գործը եւ կը շարունակէ մնալ ժողովուրդի իրական պաշտպանի իր հնաւուրց բարձր զիբքին մէջ :

Եւ մղուած այս մտածումներէն, եւ, այսպէս հրապարակով միանգամ ընդ միջա կը հրատարակուի այդ բողոքներէն ու իրենց անհիմն բողոքողներէն եւ իմ մէկ քանի ընկերներու հետ զատնամ Մայր Դաշնակցութեան ու սրտագին պարտք կը համարեմ ինձի այս առթիւ, կոչ ընելու բոլոր այն Դաշնակցականներուն որոնք պատասխանեցին այդ բողոքներուն, որպէսզի սխալին իրենք ալ, ու, քանի ուշ չէ դեռ, վերցնեն իրենց հաւատքը այդ Մասնախումբին վրայէն որը չէ՛ իրենց երեւակայանքը : Եթէ կ'ուզեն մնալ մաքուր, թո՛ղ վերահաստատուին իրենց հին հաւատքին մէջ թէ Հ. Յ. Դաշնակցութիւնն է հայ ժողովուրդին միակ զօրեղ պաշտպանը և թէ զէպ ի այն միայն պէտք է երթալ : ՍԵՒՐԱՔ Ե. ԳԱՅՐԻԷԼԵԱՆ

Նախկին անգամ Եզրկատուի Բողոքող Դաշնակցականներու Մասնախումբին : Աղեք. 1 Փետր. 1908

ԱՐՇԱԼՈՅՍ Զեռքէ կը ծախուի Տիար Գրիգոր Տամկաճեանի քով, Պէն էլ Սուրբէն, հատը 20 փարայ սղլի :

ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ

Ո՛վ երևանացի, քաղաքի օրեր, եւ դո՛ւք մանկութեան վաղակոյն ժամեր...

Մանկութեան օրեր յուշերով շեղուն թեւեւ մոռցուց զիս, քաղաքի շա՛հ հեռուն...

Երբ կը յիշեմ ձեզ այժմով արցունքոյ Սիրս կը խոցուի կը շինի վերջոս...

Յեւ բո՛կիք քան զարեան վրային, Դրօշակի հոգոյս ձեր կնիքով յուսնդին...

Սփռե՛ք իմ վերք ծով ծիսացոյ հոգոյն Ռակեդիք յոյսիցս անանկ վարդագոյն...

Ո՛վ դուք անկողնաց օրեր մանկութեան, Յանկարի ժամեր իմ անկողնութեան...

Մանկանս կուզեմ զոնկ ևս վայրկեան Կ'այտնեմ ուսուսեմ գառնուկի նման...

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԹՈՒՌԻՒՆՆԵՐ ԵՒ ՄՏԱԿԱՆ ԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թուրք կառավարութեան ելմը տական անցուկ վիճակի մասին, Փետրուար եօթը թուականու Ռիւթէրի...

Երկրորդ և երրորդ զօրքանակին հայթայթելները սպառնացած են...

Երկրորդ և երրորդ զօրքանակին հայթայթելները սպառնացած են բանակներուն պէտքերը հայթայթելու...

Բուն իսկ այս է պատճառը, կը յաւելու հեռագիրը, որ ելմտական նախարարութիւնը վերջինիս հայրը կարգադրել կարենալու համար...

Ելեւմտեց նախարարութիւնը այժմ բանակցութեան մտած է ճէօյժ Օռիանթ Պանդի հետ, որ 100,000 Օսմ. ոսկւոյ վճար մը ընել խոստա-

ցած է, եթէ պէտք եղած երաշխաւորութիւնը ցոյց տրուի իրեն:

Նոյնչափ գումարի մը համար դիմում եղած է նաև «Պանդ Գոթեր-սիալ տ'իթալի» գրամատան: Երկու գրամատանց հետ ալ բանակցութիւնները կը շարունակուին և յաջողութեան հաւանականութիւն կը տեսնուի, թէպէտև այս հաստատութիւնները փոխելով առաջարկեալ պայմանները՝ հարիւրին մէկ աւելի, այսինքն եօթը վր. տոկոսով փոխառալ յանձն կառնեն այն ալ հինգ տարուան պայմանագրով մէջ վճարելի: Տոկոսին համար առաջարկուած արդի սակը, մինչև ցարդ այս կարգի գործողութեան մը մէջ եղած չէր ընաւ Օսմ. կառավարութեան:

Աւելին կայ: Կը հաւաստեն թէ Իտալական գրամատուները կուզէ որ իր փոխառութեան տոկոսը փոխառութեան առաջին տարւոյն մէջ գանձուի:

Հայթայթուած երաշխաւորութիւնները Հանրային պարտուց վարչութեան արամագրուած եկամուտներէն աւելցածներն են, որոնք մանաւանդ 1911էն առաջ չեն կրնար ստանալու իր և է փոխառութեանց համար, որովհետև ամբողջովին ուրիշ յանձնառութիւններով ընտանաւորուած են: Իսկ գալով փոխառուած 200,000 ոսկւոյն, շատ քիչ ժամանակուան թիւթեացում մը միայն պիտի կրնայ յառաջ բերել և կառավարութիւնը իր անմիջական պէտքերը հոգալու համար վերստին փոխառութեանց դիմելու պարտաւորեալ պիտի ըլլայ:

Այլէն ջախէն կատարուած փոխառութեանց այս սխալէմը, դիւանագիտական և ելմտական շրջանակներուն մէջ չափազանց կ'զբաղեցնէ միտքերը, և իրաց այս վիճակը սեւական չի նկատուիր:

Ծանօթ: Այս կարգի դիմումներն առաջ հրատարակութեանց առթիւ, վերադարձուներ չ'ընել անկարելի է արդէն:

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

ՕՐԻՆԱԿԵԼԻ ԲԱՐԵԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

ԿԵՐՍԻ ՓԱՍՏԻ ՏԵՍԱԿԷՆ

Անգլիոյ քաղաքներէն միոյն բազմամարդ պոլոտային մէկ անկիւնը՝ անգործ և անզբաղ կեցող մէկ քանի մարդոց քով լաւ հարուած մարդ մը մօտենալով, կը հարցնէ թէ ո՞րչափ ատեն է ի վեր այս պէն անգործ մնացած են:

Անոնցմէ մէկ քանին երկու երեք և աւելի շարաթներ անգործ մնալին կը յայտնեն:

Բարեսէր անձը, « ուրեմն բական ատեն կայ որ կուշտ փորով տաք կերակուր մը կերած չէք. ո՞հ, տաք կերակուր մը որչափ արտօթելի պիտի գար ձեզի: »

Այս խօսակցութեան միջոցին ուրիշ թափառաշրջիկներ ալ կուգան կը միանան անոնց, և բարեսէր ան-

ձին դիտողութիւններուն ճշմարիտ ըլլալը կը հաստատեն:

Օ՛ն ուրեմն. բոլորդ ալ ինձի հետ եկէ՛ք: Կ'ըսէ մարդասէր անձը և մօտեցը գտնուող ճաշարան մը կառավորդէ զանոնք, ու կը յանձնարարէ ճաշարանապետին՝ որպէս զի առատ և համադամ կերակուրներ տայ բոլորին ալ:

Ճաշարանապետը յուզուած այս բարեգործ անձին կատարած բարերարութիւնէն, « Բարի գործ մը միշտ բարի յաջողութիւններու ծնունդ կուտայ » ըսելով, կը շնորհաւորէ այս մարդասիրական ձեռնարկը:

« Այո՛, բարի գործ մը կատարեցինք, սակայն զանէ ամբողջացնենք զայն ըսելով » ճաշարանէն դուրս կելլէ և քանի մը վայրկեան վերջ՝ ընկերակցութեամբ երկու կառապանի, ծերունի կնոջ մը, լրագրի երկու ցրուելի և երկու գործաւորի հետ կը վերադառնայ և անոնց ալ կերակուր տրուելը կը յանձնարարէ ճաշարանապետին:

Սեղանակիցները իրարու հետ մրցելու եղանակով մը կը ճաշակեն համադամները. որովհետև չէ՛ թէ իրենց պարագայ մնացած օրերուն, այլ գրամ վաստկած օրերին ալ չէին կրնար այդ աստիճան ստամոքսին ծանրաբեռնել:

Մարդասէր անձը թշուառներուն այս կերպ արտօթանք ուտելը տեսնելով զգացած հրճուանքէն ճաշարանապետին դառնալով:

« Տեսէ՛ք, տեսէ՛ք, ի՞նչ գեղեցիկ տեսարան, երանի՛ թէ օր մը այս քաղաքին բոլոր աղքատներուն ալ այս տեսակ հացկերոյթ մը կարենայի տալ: »

« Ստուգիւ Տէ՛ր, դուք շատ մեծ ու անզուգական բարեսէր մ'էք ըսելով շորքորդութիւններ կը շրջալէք ճաշարանապետը: »

« Բանի՛ հոգի եղան հիմայ ընդամենը, ըսաւ մեր բարեգործը: Հինգ, տասը, տասներկու, տասնե վեց, դեռ քսան ըլլալու չորս հոգի կուզէ: Չեմ ուզեր որ կոտորակաւոր ըլլայ: Կեցէ՛ք հիմայ չորս հոգի ևս կը գտնեմ » ըսելով դուրս կելլէ, սակայն բական ժամանակ անցնելէն վերջ չի վերադառնար:

Անշուշտ կռահեցիք եղածը: Մեր տիպար... բարեգործ անձը չի երևար. անպատճառ իր պարտականութիւնը մոռնալով, ուրիշ կողմի վրայ նոր աղքատներ կերակրելով կզբաղի:

Մեծահոշակ բայց անբաղդ թէնորը՝ Պ. Բարիւզօ, որ անցեալ տարի Ամերիկայի մէջ գատական վիթխարի գայթակղութեան մը պատճառ տուաւ, Կենդանաբանական պարտեզին մէջ գեղեցիկ երկտանի մը գէշ աչքով նայած ըլլալուն համար, այս տարի ալ իր վրայ խօսեցնել կուտայ, Անգլիական առևտրական տան մը տուած բացին պատճառաւ 200000 Ֆրանկ շուրջ դնելով: Իսե՛ղծ թէնոր. Երգելով կը դիզես ու տըլրելով կ'սպառես:

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՐԵՍԵ

ԹԱՂՈՒՄ

Անցեալ Ուրբաթ օր՝ կէս օրէն յետոյ ժամը երեքուկէսին տեղի ունեցաւ թաղման հանդէսը Տեար Արփիար Արփիարեանի, որ ինչպէս ըսուած է, Չորեքշաբթի երեկոյին ըսպանութեան մը զոհ եղաւ, հայու մը ձեռքով նետուած ըէլովէրի երեք գնդակներով:

Խուռն բաղմութիւն մը լեցուած էր եկեղեցին որ ամբողջովին լուսազարդուած էր, և ուր՝ թաղման արարողութեանց ժամանակ՝ Գեորգ Առաջնորդը՝ դամբանական քարոզով մը ներկաներուն յիշեցուց հանգուցելոյն կարողութիւնները և զանազան յատկութիւնները և իր այդ բարոյական ուժերով հանրային կեանքի մէջ ունեցած գործունէութիւնները: Նորին Գեորգապատուութիւն համոզուած շեշտելով իր քարոզը վերջացուց ըսելով որ՝ Ա. Արփիարեան թէև աղքատ ապրեցաւ, բայց հարուստ կը մեռնի, երբ անոր գրական գործունէութիւնները աչքի առլէ ունենանք:

Ծաղկեպսակներու ներքև անտեսանելի դարձած Պ. Արփիարեանի դագաղը, ըսաւ, անժխտիկ ապացոյց մ'է թէ, Հանդուցեալը իր կեանքի ընթացքին մէջ համակողմաներու շրջանակ մը ստեղծել կրցած էր իրեն համար: Բան մը՝ որ արդի կեանքի պայքարներուն մէջ դժուարին է ձեռք բերել:

Հայ ազգին մէջ արդէն իրական միութարութիւնը մարդ մեռնելէ վերջը կրնայ ունենալ, եթէ կարող ըլլայ տեսնել ու լսել թէ՛ իրեն համար ի՞նչ հանդէսներ կը սարքուին, ի՞նչ աչքեր կ'արցունքոտին, ի՞նչ քարոզներ ու ճառեր կ'արտասանուին և ի՞նչ գեղեցիկ բառեր կը շարունակեն անուրին շուրջը:

Գեորգ Առաջնորդին խօսքերէն կը հետեցնենք թէ՛ Տեար Արփիարեան այդ կարգի զրկուածներէն մէկը եղած է, որովհետև Աղքատ ապրած է և իր միութարութիւնը կ'ըլլայ միայն դագաղին վրայ դրուած բազմաթիւ պսակները, որոնք սակայն ո՛չ խօսելի գիտեն և ո՛չ միութարեւ ո՛ր և է կերպով: Ըսողներ կան թէ պսակները « կեզիքի » ծածկոյթներ են շատ անգամ:

ՍՊԱՌՆԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ Բիրաւիտ Օրաթերթը հաւաստի աղբիւրներէ կը տեղեկանայ թէ՛ Ն. Վսեմութիւնը Պօղոս Բաշա Նուպար և Արթիւր Բաշա Եագուպ սպառնական նամակներ ստացած են մէկ քանի օր առաջ և իրենցմէ 50,000 ական ոտի կուզուի ի հայրը Հայ յեղափոխական կազմակերպութեան մը: Յիշեալ թերթը « Հայկական դաւադրութիւն » խորագրին տակ հետեւեալ կերպով կը պատմէ սոյն միջադէպը: « Մեր

պաշտօնակցին Պ. Արիարեանի ըս- պանման առթիւ բացուած հարցա- քննութեանէն կապացուցուի թէ՛ կը գրէ Բիրաւիս . շատ լաւ կազմակեր- պուած դաւադրութեան մը հանդէպ կը գտնուինք . Այս առումով իմա- ցանք որ Ն. Վանուսթիւն Պօղոս Բաշա Նուպար ութը օրի չափ առաջ նա- մակ մը ստացած է, որով յանուն Հայ յեղափոխական կազմակերպու- թեան մը 50,000 սոկի կուզուի իր- մէն մահու սպառնալիքով :

Նմանօրինակ սպառնալիք մ'ալ Ն. Վ. Եագուպ Բաշա Արթիւնին զը- կուած է :

Վառավարութիւնը արդէն քա- նի մը հոգիներ ձերբակալած է և ու- ըիչներ ալ պիտի ձերբակալուին ի մօտոյ : Կը կարծուի թէ մեղաւորի- ներու հետքերն են այս գոնըւածնե- ըր :

ՆՈՒՐԱՏՈՒՈՒԹԻՆ

ՓՈՒՍԱՆ ԵՄԱԿԵՊՍԱԿԻ ԵՒ ՎՐԻՊՍԿ

Քաղաքիս Աղքատահամ Ընկե- ղութեան Պատ. Գործ. Ժողովոյն կողմէ ամսոյս 13ին հետեւեալ գրու- թիւնը ստացած ենք ի հրատարա- կութիւն .

Դահլիճ 9 փետ 1908

Պատ. Խմբագրութիւն «ԱՐՇԱԼՈՅՍ»

Տեղական բոլոր թերթերն ալ գրեթէ առանց բացառութեան մեծ գովեստներով խօսեցան իր գործու- նէութեան և արժանիքին վրայ, իսկ թաղման թափօրը տեղացիներու ան- համար բազմութեան մը մասնակցու- թեամբ տեղի ունեցաւ :

Քամէլ Բաշայի համակիրներուն և իր գաղափարները յարգողներուն թիւը եթէ իր թաղման մասնակցող- ներուն հաւատարին ստուգուի, ոչ ոք պիտի ուզէ մեղադրել զինքը յանուն ազգայնական կուսակցու- թեան Անդ. կառավարութեան առ- ջև իր ըրած գիմուսներուն համար :

Ամսոյս 14 ի Ուրբաթ օրը, ազ- գայնականներու կուսակցութեան անդամները գումարում մը ունեցած են, որուն մէջ իրենց Վարչական Ժո- ղովոյն Ա. և Բ. Ատենապետներ ընտ- րած են. Սակայն Ընտրեալներուն ա- լելի մօտէն ծանօթ և իրազէի տնօրէն- նոյն հաւատքը չեն տածեր նորոն- տիր Ատենապետներուն նկատմամբ թէ՛ պիտի կրնան լրացնել այն պակա- սը որ նախորդ երիտասարդ Ատենա- պետին մահուամբ կը գոյանայ : Հետեւաբար կարծողներ կան թէ՛ Ազ- գայնական կուսակցութեան գործու- նէութիւնը յետ այսու սեղմ սահման- ներու մէջ պիտի ամփոփուի :

ԼԵՕԻ ՅՈՐԵԼԵԱՆԸ

ՊՈՉ

Ձեզ յայտնի է անշուշտ, որ առա- ջիկայ 1908 թիւ Ապրիլի վերջերին տօն- ուելու է Լ. Է. Օ - ի զբաղման գործունէու- թեան քսանհինգամեայ Յօրհանը : Հա- մակրողները լայն շրջանից ընտրուած մի յանձնաժողով, որի անդամներ են՝ Ա. Ահարոնեան (Նախագահ) Յովհ. Ալի- խանեան, Տօթ. Վ. Արծրունի, Տիգ. Հ. Առտամեան, Ա. Բաշինջաղեան, Մ. Դուրախանեան, Բ. Ա. Ա. Սարգսեան, Լ. Ղուկաս, Տիգ. Հ. Մարտիրոսեան, Ազ. Մելիք-Ազարեան, (Գանձապահ) Ս. Յարութիւնեան, Բժ. Բ. Նաւասարդ- եան, Ա. Սարուխանեան և Յ. Բոչար- եան (Քարտուղար), ձեռնարկել է ար- զէն այդ նպատակով նախապատրաստ- կան աշխատանքները Ընդհանուրի ցած- կութիւնն է հայ զբաղմանութեան այդ բազմաշխատ վաստակաւոր յօրհանը յարգանքի արտայայտութիւնից բացի հասուցման մի միջոց, որպէսզի մեր ժողովրդի գիտակից խաւերի ջերմ մաս- նակցութեամբ և աջակցութեամբ հնա- բուրութիւն տրուի յոգնաշուն յօրհ- եարին նիթական հոգսերից ազատ, այ- սուհետեւ ևս շարունակել իր այնքան բեղմնաւոր, այնքան հանրաշահ աշխա- տութիւնը հայ մտքի ասպարէզում :

Դիմելով Ձեզ, Մեծպատիւ պարոն, Յանձնախումբը խնդրում է Ձեր շրջա- նում ևս կազմակերպել տեղական մաս- նախումբեր և հետաքրքրել գիտակից հայրենի զբաղմանութեան նախանձա- խնդիր անձանց՝ իրենց նիւթական բա- րոյական աջակցութեամբ օժանդակել հասարակական այս զեղճիկ պարտքի լիակատար իրականացման :

Գործի ընդհանուր գրութեան մա- սին իրազէի մնայու համար, Յանձնա- ժողովը, վստահ Ձեր լիակատար աջակ- ցութեան վրայ, խնդրում է Ձեզ պէտք եղած տեղեկութիւնները հաղորդել Յանձնաժողովիս Գարտուղար Յակոբ Գո- շարեանցին հետեւեալ հասցեով :

Comptoir de la Sociéte Arménienne Bienfarsance. Pour Mr. H. Kocarian Russie TIFLIS

Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ն Ե Ր

Լիզպոն 8 փետ. — Ամենակա- սարեայ կարգապահութեան յոյսա- կաւորաց քաղաքի եկեղեցի հասա- Վեհաշուք էր հանդէսը : Մեծըն- քաւա կառերը սեւ ասեղնագործերով զարդարուած էին : Արքայական ըն- սանիքը յոյսակաւորութեան չէր մասնակցեր : Նշանակելի պարագայ մը : Երկու նաւառի հրապարակի մը վրայ՝ ուր յարմարութեամբ սեղի ունե- ցաւ, զօրախումբերէն զստ ոչ ոք կը տեսնուէր :

Կ. Պոլիս 9 փետ. — Դեսպան- ները իրենց կառավարութիւններում խորհուրդ տուին Մակեդոնիոյ մէջ մեցուելիք դասական քաղաքացու- ներուն ծրագիրը յետաձգել : Աստի կը նախընտրեն որ փոփոխութիւն մը ըլլայ ծրագրին մէջ . այնպէս որ՝ Բ. Դրան կողմէ մերժումի չի հանդիպի :

Ս. Բեքերայուրկ 9 փետ. — Չա- րը իր Վիեննայի դեսպանին արտօնեց Բեքերայուրկ վերադառնալ : Այս դէպքը շատ մը մեկնաբաններու դուռ կը բանայ, ի նկատի ունենա- յով Պ. Ահարոնայի ասեղնախօսու- րիւնը, որ Ռուսիոյ վրայ յոռի սպառնալիքներ մը բողոք է :

Լոնտոն 10 փետ. — Երկուսի մը աստիճանակի մթերանոցին սերերը իրենց վճարումները դադարեցուցին : 5000 հոգի կ'աշխատէին հոն :

Լոնտոն 10 փետ. — «Տէյի թէյերու» Ս. Բեքերայուրկէն կը սեղեկանայ թէ՛ Ռուսիա Մակեդո- նական հարցին նկատմամբ պատաս- խանած է Մեծն Բրիտանիոյ թէ՛ այդ խնդիրը անշուշտ կ'անոտարարուի- ներով շրջապատուած է ևս հաւանա- կան է որ Բ. Դրան կողմէ մերժման հանդիպի :

Ռաշիկկըն 11 փետ. — Երեկ պայմանագիր մը կրնալուցար Մի- աջեայ նահանգաց և Թրանսայի միջեւ, որով երկու երկիրները ամեն խնդրոյ համար իրաւախոնարիւն կ'ընդունին :

Ճեկովա 11 փետ. — Փորոն- կայի նախկին նախարարը, Պ. Փր- անգո, հոս հասաւ :

Վիեննա 12 փետ. — Պ. Ահ- արոնայ պատասխանատուներուն առջեւ իր Պոնտայի երկաթուղոյն միացման համար պատրաստ յասակագիծը շատազօյնեց : Վիեննայի քաղաքի ըն- քաղման մէջ՝ յանձնախումբի սեղե- կաբերը իր համակրանքով արտայայ- տեց Մարոֆի մասին Թրանսայի ը- րած շահերուն համար :

Արտիկի գործոց նախարարու- րեան պիտի ընտրուի քաղաքացու :

Կ. Պոլիս 12 փետ. — պաշտօնա- պէս կը ծանուցուի թէ՛ Փորթերը Սիւնայուրացը պարպած են :

Կ. Պոլիս 12 փետ. — Վանի մէջ կասաղի ընդհարում մը սեղի ունե- ցած է Փորթ գործերու և Հայ յե- դարիսականներու միջեւ, այս վեր- ջիներէն ուժանակներ գործածուած են : Երկու կողմէն ալ բազմաթիւ զոհեր կան :

Լոնտոն 12 փետ. — Բոնիսիոյ կիները տուգանքի և կամ վեց շաբ- րուան բանտարկութեան դատարար- տուցան : Կանայք բանտարկութիւնը նախընտրած են :

Մասրիս 13 փետ. — Կը հեր- քուի այն յորը թէ՛ Թրանսայ առա- ջարկած ըլլայ Մարոֆի մէջ Սպա- նիական զօրաց յարեւումը :

Լիզպոն 13 փետ. — Մանուէլ Թագաւորը 1906ին ապստամբող ծո- վային ղեկնորաց ներման հրովար- սակը ստորագրեց :

Պերլին 13 փետ. — Գերման կա- ռավարութիւնը պիտի յանձնա- խմբին Զիլմու մէջ եղած ծախսած դէմ դրած զանգաններուն պատաս- խանելով ըսաւ թէ՛ Գերմանական ազդեցութիւնը Զիլմու մէջ անվկանդ պահպանելու համար՝ անհրաժեշտ է որ Բիւ-Քիո զօրութեան համար եղած ծախսերը շարունակուին : հա- կապակ պարագան Գերմանիոյ ճիւ- բութիւնը եւնարեւել պիտի տայ :

Հոնոլ 13 փետ. — Պենասիոյ մի- ջադէպին մասին եղած հարցապն- դումի մը պատասխանելով, Պ. Թի- րոնի յայտարարեց թէ՛ այդ խնդիրը նեկիւսին (Մեկնելի կայսր) հետ քաղաքացու կարգադրուած է :

Հոնոլ 13 փետ. — Կըսուի թէ Մեկնելի կայսր 120,000 սոկի կը պահանջէ Լիւսի վրայ ունեցած իր իրաւասութիւններէն ձեռք փաշե- յու համար :

Լոնտոն 14 փետ. — Սըր Է. Կրեյ խորհրդարանին հարորեց թէ՛ Փոր- ֆօ-Պարսկական խնդիրը Բրիտանա- կան կառավարութեան ոչապրտիւ- նը միջոց շարունակ կը պահէ : Միջեւ ցարդ նշանակելի յառաջիկային մը եղած չէ : Փորթ գորախումբերը պարսկական հողերը կը գրաւեն :

Ս. Բեքերայուրկ 14 փետ. — Ռուսիա ալ նպաստ ունի Դանու- րեան Արիական երկաթուղոյ յիծ մը հաստատել :

Կ. Պոլիս 14 փետ. — Մակե- դոնիոյ հերոսախումբերը հաշտուելու համար Անգլ. կառավարութեան ներ- կայացուցած ծրագիրը մեկ ֆանի սերտութեանց կողմէ գործնական չը- հանարուելով, առ այժմ այդ գա- յախարը մեկ կողմ քողարած է :

Ս. Բեքերայուրկ 14 փետ. — Լոնտոնի Եպիսկոպոսը հոս հասաւ և շաբաթ մը պիտի մնայ : Չարի կող- մէ ունկնդրութեան ընդունուցար և յետոյ քաղաքացուներէն եկեղեցական- ներուն աջակցեց :

ՏՕՐՔ ԵՄՓԵՒ Լ. ՃԵՔՈՊԵԱՆ ԵԱՐԱ ՆՈՒՊԱՐ ԲԱՇԱ, ԹԻՒ 20

Ամերիկայի համալսարաններէն վկայեալ և անուանի հիւանդանոցնե- րու մէջ գործնական փորձառութիւն ստացած բժշկուհի . յաջողակ վի- ռահատ՝ ենթակային առանց ցաւ պատճառելու :

Մանկաբարձուհի և մանագէտ՝ կանանց ծննդական գործարաններու և փորձարտեան ախտերու, իսկ մա- նուկներուն՝ ամէն տեսակ հիւան- դութիւններու :

Կատարեալ խնամքով և գի- տական նորագոյն մեթոտներու շնոր- հիւ հիմնապէս կը բժշկէ իր խնամոց յանձնուած հիւանդները :

Հիւանդ կ'ընդունի առկա օրի քիս յետոյ ժամը 2-5

Ա.Մ.Է. Իրեկոպի աղետաց սրբի զարմանում :

ՏԵՂԱԿԱՆ ԼՈՒՐ

ՄՈՒՍՐԱՅԱ ԲԱՇԱ ՔՍՄԷԼ

Մեկ կողմանէ Եգիպտոսի ազ- գայնականներուն հարցը Անգլիական Բառլամենթին ընդ հարցապնդումնե- րու առարկայ կը դառնար վերջերս, միւս կողմանէ ազգայնականներուն սիրելի Պետը՝ Մուսթաֆա Բաշա Քա- մէլ, անկողնոյ ծառայելով կը ծիւ- րէր, և ուր ուրեմն իր հոգին կ'ա- ւանդէր իր բոլոր ծրագրիներն ալ կիսատ թողնով . . .

Անցեալ շաբթու գրեթէ ամ- բողջ Եգիպտոսը ոտքի վրայ էր, Մուսթաֆա Բաշայի մահուամբ և թաղումովը զբաղելու համար :

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԾԻԱԽՈՏԻ ԵՒ ԸՆՏԻՐ ՍԻԿԱՐԷԹՆԵՐՈՒ ԳՈՐԾԱՐԱՆ

ՎԱԿԸ - ԷԼ - ՊԻՐԲԷ ՓՈՂՈՑ ԷՕՁՊԷՔԻՅԷ



ՍԵՓԱԿԱՆԱՏԷՐԲ

Ն. ԵՒ Ա. ՀԱՃԷԹԵԱՆ ԵՂՐԱՐԻՔ

ՅԱՏԿԱՆԻՇԸ ԻՐԵՆՑ ՎԵՐԱՊԱՀԵԱԼ Է:

Արևելեան ընտիր ծխախոտներէ պատրաստուած թարմ սիկարէթներ անմրցելի աժան գնեքով ունենալու կամ վայելելու համար, ամէն անգամ և ամէն տեղերէ տեղի՛ պէտք է նախընտրել մեր վաճառատունը:

Առաջնակարգ տեսակներէ Եւրոպական սիկարետներու լաւագոյն զանազանութիւնները գտնելու համար՝ հարկ չ'կայ հոս ու հոն ժամաւաճառ ըլլալու բաւական է անգամ մը անպատճառ այցելել մեր վաճառատնիկն:

Պարսկական ամենաընտիր թէ՛ մզէքիլի այլ և այլ տեսակները բացի մեր վաճառատունէն, ուրիշ տեղերէ գնելը պարզապէս սխալիլ է:

Մեր վաճառատունը վերջապէս, զիններու աժանութեամբ, տեսակներու բազմազանութեամբ ու ճոխութեամբ և այլ ամէն տեսակէտներով, և մասնաւոր գործածել որչա՞ծ ապրանքներուն թարմութեամբը անմրցելի է, որուն անժխտելի ապացոյցներէն մին ալ զարգացած եւրոպացիներէ օրրատօրէ մեծ քանակութեամբ և ստուար թուով եղած յանձնարարութիւններն են:

Ն. ԵՒ Ա. ՀԱՃԷԹԵԱՆ ԵՂՐԱՐԻՔ

ՄԻՆԿԸՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՒ ՄԻԱԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ Ժ. ՆԱՅՏԼԻՆԿԷՐ

Պալատի փողոց. Խաչնէտարի սեփականութիւն, Պրիսթօլ Օրթէլի ճիշտ գիւմաց Գաֆէ Տը Լա Պուրսի կից

Հին եւ ՆՈՐ ԱՇԽԱՐՀՆԵՐՈՒ ԲԱՂԱՔՆԵՐՈՒՆ ՄԷՋ ՄԱՍՆԱՃԻՂԵՐ ՈՒՆԻ


Աշխարհի ամենէն լաւագոյն կարի մեքենաները ՍԻՆԿԷՐՆԵՐՆ ԵՆ Եւ ասոնցմէ մինչեւ ցարդ 17,000,000 ծախուած է:

400 և աւելի վիսյական եւ մեքանիզմով վարձատրուած, Երաշխատուող մեքենաներ.

ԱՄԵՆԷՆ ՄԵՆՐ ՎԱՐՁԱՏՐՈՒԹԻՒՆԸ ԱՌԱՋԻՆ ՄՐՅԱՆԱԿ

Փարիզի 1900 ի Տիեզերական արուեստանախիսի մէջ ստացած է. ՀԱՅԹԱՅԹԻՉ ԲՐՈՒՍԻՈՑ ՀԱՅԹԱՅԹԻՉ ԱՆԿՂՈՑ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԻՔԻՆ ԵՒ ԲԱԳՍԻՈՐԱԿԱՆ ԱՐԲՈՒՆԵԱՑ ՀԱՅԹԱՅԹԻՉ Ն. Բ. ՆԱՅԷՎԱԿԱՆ ՏԱՆ

Կեղծերէն զգուշանալ, ուշադրութիւն դարձնել իւրաքանչիւր մեքենայի վրայ ՍԻՆԿԷՐԻ յաջկանչիմ



Չրի դասեր և նորոգութիւններ, ՍԻՆԿԷՐ մեքենայից համար, յաճախորդաց տուններուն մէջ:


Վճարմանց դիւրութիւն

Փոխանակութիւն հիւներու և նորոգութիւն ամեն կարգի Մեքենայից

ԳԻՆ ԶԱՓԱՒՈՐ

ՄԻՀՐԱՆ ՍՍԳԱԵԱՆ

Spécialiste pour les cheveux ՇԱՐԱ ԱՊՏ ԷՒ ԱՉԻՉ ԹԻՒ 5.



Մինչև հիմայ եղած փորձերով հաստատուած է որ Փափագ Օրթի կամ Պիթ Օրթի եւ ասոնցմէ մասնաւորապէս պատրաստուած հեղուկներուն գործածութիւնը սքանչելի արդիւնք տուած է՝ թէ՛ մաղիքը չի թափելու եւ թէ՛ երկնցնելու համար: Միակ դարձան է այս պատրաստութիւնը՝ անիծները, ոչիւներն ու մաղիքու արմատներուն վրայ թոյն դրած միքրոպները սպաննելու:

Մինչև ցարդ ինձ դիմողներն վերջին ծայր գոն մնացած ըլլալով՝ յուսով եմ որ յետ այսու ալ զժգոն ըլլալու պատճառ մը չ'պիտի ունենան: Անխարգախ ու մեծ խնամով պատրաստուած Պուստայ ամենաընտիր մաղի ներկերուն ամէն գոյններէն ալ կարելի է գտնել իմ վաճառատունս: Գիմեցէք, փորձեցէք եւ գոն պիտի մնաք: Մ. ՍՍԳԱԵԱՆ

ՄԵԾ ՍՐՉԱՐԱՆ ԼԱՅԿԱԿԱՆ

GRAND CAFE ARMENIEN (Le Caire)

Սայն Մրճարանը որ Միսսն էլ Խաղնեսարի օդատուն հրապարակիկն վրայ կը գտնուի, իր մաքրութեամբ և ընդարձակութեամբ տեսակիկն մէջ յարմարազոյններէն միկն է հանգստանալու ժամանակ անցնելու: Մրճարանը յաճախողներ վերոյիշեալ առաւելութիւններէն զոս հոն պիտի գտնեն նաեւ շաւուր ընկերներ, ընդ և ընկեր պիւրատոներ և անկերի ապաստարաններ:

ՍԵՓՀԱԿԱՆԱՏԷՐ ՄԻՍՍԷ ՍԱՐԴԻՍԷԱՆ

ԾԱՆՈՒԳԻՐԵՐ

ԺՈՂՈՂՈՒՐԴԻՆ ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆԸ

Թիւ 1 Թրքուհին 50 սանթիմ
« 2 Հիւլէն 50 »

Ժողովուրդին Մատենագարանի գրքոյկներուն հեղինակն է Տ. Ա. Պալեան, եղիպտոսաց քաջ ծանօթ իր հրատարակութիւններով եւ յօդուածներով: Թրքուհին, պատկեր մ'է Ուրֆայի կոտորածին, եւ Հիւլէն եղիպտոզաղթ հայութեան առաջին օրերուն մի մանրանկարը յեղափոխական գործունէութեանց վրայ խորհրդածութիւններով: Դիմել « Արշարյս » ի խմբագրութեան կամ ուղղակի հեղինակին, հասեալու հասցով:

A. BALIAN

(Egypte) Le Gaire

ԵՐԵՎԱՆԻ
ՔԱՆՏՈՆԻ ՍՈՒՍՔԻՆԻ
ՔԱՆՏՈՆԻ 16 ԷՋԵՔԷ ԲԱՂԱՅԻՆ
ՏԵՊԷՆԻ ԶԻՆԻՆԻ ԳՐԱՊԱՐԱԿ ՊԻՏԻ ԵՂԷ ԳՅՈՑ ՄԱՅՏ Ի ՊՅ
Բաճակիկը ամեն օր 4ԱՆԻՒԿ, Չեֆէ Լաշը Մէկ ԴԱԼ. ՊՂ.Զ.
Հասցէ՝ Rédaction de la Revue « EREWAK » Chareh Abd el Aziz Le Caire

ՏՊԱՐԱՆ

ԱՐՇԱԼՈՅՍ ԼՐԱԳՐԻ ՀԻՄՆՈՒԱԾ 1900 ԻՆ

ՀԱՍՏԱՏՈՒԱԾ Է Ի ՇԱՐԱ ԱՊՏ-ԷԼ-ԱՉԻՉ ՇԷՐԻՑ ԲԱՇԱՅԻ ՊԱՐՏԷՉԻՆ ԴԷՄ

Կ'ընդունի տպագրական ամէն տեսակ յանձնարարութիւններ. նամակազուլս, ազդարարութիւններ, այցեքարտեր, մահազաներ, գիրքերու և պրօչիւրներու տպագրութիւններ և այլն: Յանձնարարութեանց համար սակարկուած գնոյն կէտը կանխիկ է, իսկ մնացեալ կէտը յետ տպագրութեան՝ յանձնման պահուն վճարելի է: Յանձնարարութիւնք ամենայն ճշգրտապահութեամբ պիտի կատարուին: ՎԱՐՁՈՒԹԻՒՆ ՏՊԱՐԱՆԻ